# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**25 մարտի 2026 թվականի N 119 - Ա**

**ԲԵԼԼԱ ԲԱՂԴԱԳՈՒԼՅԱՆԻՆ «ՆՈՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, 2026 թվականի մարտի 13-ի հարցազրույցի N 651 արձանագրությունը և Բ. Բաղդագուլյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. 2026 թվականի մարտի 26-ից Բելլա Բաղդագուլյանին նշանակել «Նորավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով, ազատելով նրան նույն կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:

2. Բելլա Բաղդագուլյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել «Սիսիանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Գևորգյանին:

2026-03-25 17:56:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. մարտի 25
ք. Կապան